



**ԱՄՆ դեսպանը ծանոթանում է Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ ծրագրով ներդրված գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաներին**

ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչը, Տավուշի մարզպետ Արմեն Դուլարյանը և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի տնօրեն Սկրտիչ Մուրադյանը համատեղ ՀՄՀ-Հայաստան ծրագրի, Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի, ԱՄՆ Գյուղատնտեսության դեսպարտամենտի, ԷյՄԻԴԻԱյ/ՎՈԿԱ կազմակերպության ներկայացուցիչների, ինչպես նաև տեղի մի խումբ ֆերմերների հետ տեղեկատվական շրջայց կատարեցին Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքում տեղակայված Տավուշի գյուղատնտեսության աջակցության կենտրոնի փորձացուցադրական տնտեսությունում և ծանոթացան մի շարք նոր գյուղատնտեսական տեխնոլոգիաների:

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ ծրագրի նպատակն է նվազեցնել Հայաստանում գյուղական աղքատությունը՝ ներդրումներ կատարելով գյուղատնտեսության ոլորտի տնտեսական ցուցանիշների բարելավման ուղղությամբ: Ծառունակվում է ծրագրի գյուղատնտեսական բաղադրիչի իրականացումը՝ նպատակաուղղված վերականգնելու ոռոգման ենթակառուցվածքները, ինչպես նաև տեխնիկական և ֆինանսական աջակցություն տրամադրելու Հայաստանի գյուղական վայրերում բնակվող ավելի քան 45000 ֆերմերների:

Մինչ այսօր Հայաստանի մոտավորապես 300 համայնքներում ավելի քան 28000 ֆերմերներ անցել են դասընթացներ ջրի կառավարման տեխնոլոգիաների և բարձրարժեք գյուղատնտեսություն թեմաներով, ներառյալ 2500 ֆերմերներ՝ Տավուշի մարզում:

Դասընթացների կարևոր մաս են կազմում Ֆերմերների այցելությունները ցուցադրական տեղամասեր, որտեղ դասընթացի մասնակիցներին ներկայացվում են ՀՄՀ-Հայաստանի ծրագրով ներդրված առաջավոր համակարգերը: Այգեհովիտում հիմնադրված ցուցադրական տեղամասը համագործակցության վառ օրինակ է Գյուղատնտեսության նախարարության, Տավուշի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի, ՀՄՀ-Հայաստան ծրագրի և այլ դոնոր կազմակերպությունների միջև: ՀՄՀ-Հայաստանը ֆինանսավորել է կաթիլային ոռոգման համակարգի խողովակների տեղադրումը, ինչպես նաև տրամադրել է դրսից ներմուծված նոր բարձրարժեք պտղատու ծառերի և հատապտուղների տեսականի, որոնց կիրառելու պարագայում ֆերմերները կարող են բարձրացնել իրենց գործունեության եկամտաբերությունը: Տավուշի մարզում կան այսպիսի 20 ցուցադրական տեղամասեր:

Այս միջոցառման և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

[www.mca.am](http://www.mca.am)

*Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար:*